# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հեռախոս՝ 091 700667
Էլ.Փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 61**

**<<01>> օգոստոս 2019թ.**

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ,ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքով,ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության 30.07.1998թվականի թիվ 479 որոշմամբ հաստատված կարգով,<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>>ՀՀ օրենքով,ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1163-Ա և 29.12.2005թ. 2387-ն որոշումներով,հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2014թվականի ապրիլի 8-ի թիվ 101/111.4/1614-14 գրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Սարահարթ համայնքի վարչական տարածքում 06-097-0028-0001 ծածկագրով հողամասում կառուցված 198.24քմ ներքին մակերեսով համայնքային կենտրոնի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.07475հա հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:

2.06-097-0028-0001 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխադրել բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

3.Անշարժ գույքին տրամադրաել գ.Սարահարթ 10-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 1 փոստային հասցեն:

4.Ի կատարումն ՀՀ կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 17-ի թիվ 1163-Ա որոշման 2-րդ կետի 1-ին մասի դիմել ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում,198.24 մք ներքին մակերեսով համայնքային կենտրոնի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 06-097-0028-0001 ծածկագրով 0.07475 հա հողամասը Հայաստանի Հանրապետության ամվամբ պետական գրանցում կատարելու համար:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Արտյոմ Փիլոյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հեռախոս՝ 091 700667
Էլ.Փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 62

«05» օգոստոսի 2019թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ մասով, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 61, 67 և 68-րդ հոդվածներով ու հիմք ընդունելով <<Հողամասն աճուրդ-վաճառքով օտարելու մասին>> 05.08.2019թ. N 1, 2, և հողամասն աճուրդով վաճառելու արդյունքների մասին N12 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, <u>բնակավայրերի նպատակային նշանակության գործառնական նշանակության բնակելի կառուցապատման</u>
   ա) Լոռու մարզ, Սարահարթ համայնքի, <u>1-ին փողոց 53</u> հասցեում գտնվող 0.07844 հա /կադաստրային ծածկագիր 06-097-0008-0004/ հողամասը <u>216100 (երկու հարյուր տասնվեց հազար մեկ հարյուր</u> ՀՀ դրամ արժեքով օտարել <u>Գարիկ Մանվելի Խումարյանին</u>:
   բ) Լոռու մարզ, Սարահարթ համայնքի, <u>13փողոց 18 հասցեում գտնվող</u> 0.04661 հա /կադաստրային ծածկագիր 06-097-0004-0073/ հողամասը <u>83000 (ութսուներեք հազար</u>) ՀՀ դրամ արժեքով օտարել <u>Խաչատուր Պողոսի Բաղրամյանին</u>:

2. Վերոնշյալ անձանց հետ կնքել հողամասի վաճառքի պայմանագիր՝ ապահովելով գույքային իրավունքների պետական գրանցումը:

Սարահարթ համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան